ԱՌԱՋԱԲԱՆ

Քրիստոնեական աշխարհում դեռևս այդ կրոնի ձևավորման ժամանակներից սկսյալ, դավանական շրջանակներում հետաքրքրություն է ներկայացրել սրբապատկերների պաշտամունքի կամ դրանց պաշտամունքը մերժելու խնդիրը: Հարցի համակողմանի քննարկումը լուրջ ուշադրության է արժանացել բյուզանդագետների, եկեղեցու և ընդհանուր արվեստի հարցերը քննարկող պատմաբանների, աստվածաբանների, արվեստաբանների կողմից: Մի շարք արվեստագետ -մասնագետներ, հենվելով միջնադարյան սկզբնաղբյուրների վրա, գաղափարական կապեր են տեսել հեթանոսական կուռքի և քրիստոնեական պատկերի պաշտամունքի արարողակարգերում: Աստվածաբաններն էլ մեզ հասած սկզբնաղբյուրներում քննության առարկա են դարձրել Պատկերամարտության դարաշրջանում քրիստոնեական հերձվածների՝ մասնավորապես մանիքեականության, միաբնակության և դոկետիզմի գաղափարների վերաիմաստավորման խնդիրները: Կանոնագետներն ու դավանանքն հետազոտող աստվածաբաններն էլ վերստին քննարկման առարկա են դարձրել Է–Թ դարերի Մերձավոր Արևելքում Երրորդաբանության և Քրիստոսաբանության խնդիրները նորովի վերլուծելու կարևորությանը, ինչպես նաև դրանց արձագանքին ժամանակի եկեղեցական ժողովներում: Եկեղեցու ներսում պատկերների գոյության և նրա նկատմամբ վերաբերմունքի ձևավորմանը նպաստել են նաև աշխարհաքաղաքական պայմանները. Հռոմեական կայսրության արևմտյան մասի նվաճումը բարբարոս վանդալների, գոթերի և ֆրանկների կողմից, Արաբական խալիֆայության և մահմեդականության հաղթանակը Մերձավոր Արևելքում ևն.: Պատկերների շուրջ առաջացած երկու տարբեր տեսակետների հակամարտությունը Ը դարի սկզբին ի վերջո վերածվում է Բյուզանդական կայսրությունում հոգևոր-քաղաքական շարժման, որը հայտնի է Պատերամարտություն անվամբ: Այդ շարժումն իր ազդեցությունն է թողել Հայաստանի միջնադարյան պատմության վրա:

Սրբապատկերների հանդեպ հարգանքը և նրանց նկատմամբ վերաբերմունքը էականորեն տարբեր էր Արևմտյան Եվրոպայում, Բյուզանդիայում և Մերձավոր Արևելքի եկեղեցիներում: Օրինակ օրթոդոքս եկեղեցիներում պաշտամունքի աստիճանի է հասնում Քրիստոսի, Աստվածածնի, առաքյալների և եկեղեցու սրբերի սրբապատկերների նկատմամբ հարգանքը: Հայոց եկեղեցին չմերժելով սրբապատկերների նկատմամբ հարգանքը, պատմության ընթացքում ավելի մեծ տեղ է հատկացրել խաչքարին, դրանով իսկ ազգային ինքնության համատեքստում ստեղծելով նոր տիպի մշակութային արժեքներ, որոնք առանձնանում են տարածաշրջանի մյուս երկրների քրիստոնեական ավանդույթներից:

Միջնադարյան Մերձավոր Արևելքի Ե–Թ դարերի պատմությունը և մշակութային կյանքը լի են իրադարձություններով, որոնք շաղկապել են տարածաշրջանի բոլոր քրիստոնյա ժողովուրդներին: Նման իրադարձությունների թվին է դասվում Բյուզանդական կայսրության սահմաններում առաջ եկած Պատկերամարտության շարժումը, որն իր արձագանքն է գտել ողջ քրիստոնյա աշխարհում, իր խոր հետքը թողնելով նաև Հայոց եկեղեցական, մշակութային ու քաղաքական կյանքի վրա: Պատկերամարտությունն իբրև շարժում առաջացել է վաղ քրիստոնեական եկեղեցում, ի հակադրություն պատկերների պաշտամունքի, որը Ը դարի սկզբի բյուզանդական եկեղեցական և քաղաքական որոշակի շրջաններում նույնացրել են կռապաշտության հետ: Հայտնի է, որ Հին կտակարանը, ինչպես հրեա պահպանողականները, այնպես էլ մահմեդական աշխարհը թույլ չէին տալիս պատկերների պաշտամունքը, դրանք համարելով հեթանոսական բազմաստվածության մնացուկներ: Հիշյալ պատկերացումները նպաստել են Արաբական խալիֆայության դեմ պայքարի ամենալարված փոխհարաբերությունների դարաշրջաններից մեկում բյուզանդական ինքնության պահպանմանը: Ը դարի առաջին կեսից պայքար է սկսվել Բյուզանդիայի ներսում պատկերների պաշտամունքի դեմ, այն ունեցել է երկու փուլ և շարունակվել է մինչև 843 թ.: Այդ պայքարը Բյուզանդական կայսրությունում բացի աստվածաբանական բնագավառից ընդգրկել է նաև եկեղեցական ու ներքաղաքական կյանքի մի շարք ոլորտներ: Այդ ոլորտներից էր վանականության ու նրանց ան-

շարժ գույքի և ունեցվածքի դեմ պայքարը, որը ժամանակի ընթացքում դարձել է պատկերամարտ կայսրերի հիմնական գործիքներից մեկը երկրի կառավարման բնագավառում: Պատկերների նկատմամբ վերաբերմունքը բավական երկար ժամանակ երկու մասի էր բաժանել բյուզանդական հասարակությանը, որը սերտ փոխհարաբերության մեջ էր Հայաստանի և նրա եկեղեցու հետ: Պատկերամարտ կայսրերը մի շարք արշավանքներ ձեռնարկեցին արաբական տիրապետության տակ գտնվող Հայաստանի վրա քաղաքական ազդեցություն ձեռք բերելու նպատակով: Մեծ և Փոքր Հայքերի և նրանց մերձակա հայաբնակ տարածքների բազմաթիվ բնակիչներ, հաճախ նախարարական տների նախաձեռնությամբ ծառայության էին անցնում Բյուզանդական կայսրությունում, յուրացնելով այդ երկրի հոգևոր-գաղափարական հիմնական արժեքները, իրենց լուման ներդնելով կայսրության առօրյա կյանքի և մշակույթի վրա: Տարածաշրջանում պատկերների մերժման կողմնակիցներ էին նաև նույն դարաշրջանում գլուխ բարձրացրած պավլիկյան աղանդավորական շարժման հետևորդները, որի դեմ պայքարում էին ինչպես Կ. Պոլսի պատրիարքությունը, այնպես էլ հայոց եկեղեցին:

Բյուզանդիայում Ը դարի սկզբին սկսված պատկերամարտական շարժումը, որը մեկ դարից ավել փոթորկել էր Բյուզանդիայի հոգևոր և հասարակական-քաղաքական կյանքը, իր նշանակությամբ դուրս գալով ներբյուզանդական միջավայրից, դարձել է համաշխարհային հնչեղության մի իրադարձություն, որն իր յուրօրինակ դրսևորումներն է ունեցել ոչ միայն հիշյալ դարաշրջանի Բյուզանդիայում, այնպես էլ հետագա դարերում ու տարբեր քրիստոնյա ժողովուրդների մոտ, խթանելով եկեղեցական, քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակույթային կյանքը, խոր հետք թողնելով պատմական ողջ պրոցեսի վրա[1]: Պատկերների նկատմամբ վերաբերմունքն իր կնիքն է դրել եկեղեցական արարողակարգի, ազգային սովորույթների և ավանդությունների վրա: Այս երևույթի հանդեպ ավելի մեծ սևեռվածութ-

[1] Նման կտրվածքով խնդրին մոտեցել են 1987 թ. տեղի ունեցած Նիկիա Բ Տիեզերական ժողովի 1200-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակիցները, տե՛ս **Nicée II** 1987:

յուն է նկատվում Բյուզանդիայում, երբ հրապարակվում է Լևոն Գ (717–741) կայսեր[2] հրովարտակը՝ սրբապակերների և նրանց պաշտամունքի վերացման մասին: Պատկերամարտությունը վերափոխվեց և կրոնազաղափարական պայքարի շրջանակներից դուրս գալով՝ ստացավ քաղաքական երանգավորում՝ բյուզանդական հասարակությունը բաժանելով երկու հակադիր բևեռների: Բյուզանդիայում որպես պետական քաղաքականության դոկտրինա (գաղափարախոսություն) ներմուծված պատկերամարտությունը, իրականում Լևոն Գ-ի կողմից իրականացվող վարչական և իրավական բարեփոխումների մի մասնիկն էր: Հիշյալ հրամանագրից հետո, հալածանքների են ենթարկվում պատկերապաշտ և պատկերահարգ հոգևորականներն ու հասարակ հավատացյալները, որոնք եկեղեցու և պետության կյանքը չէին պատկերացնում առանց սրբապատկերների: Մայրաքաղաքում 726 թ. բռնկվում է ապստամբություն, որը կարճ ժամանակ անց հաջողվում է ճնշել: Լևոն Գ-ի որդու և հաջորդի՝ Կոստանդին Ե Կոպրոնիմոսի (741–775)[3] օրոք ևս շարունակվում է պատկերամարտության հաղթարշավը: Կայսրն էլ ավելի գործուն միջոցներ է ձեռք առնում հոգուտ պատկերամարտության, այդ նպատակով 754 թ. Կ. Պոլսի Հիերիայի պալատում հրավիրելով եկեղեցական ժողով, որի ընդունած որոշումներում մերժվում է պատկերապաշտությունը[4]: Այս ժողովը խստիվ արգելում է սրբապատկերների պաշտամունքը, կարգադրվում է անխտիր ոչնչացնել դրանք: Կոստանդին Ե-ի որդին՝ Լևոն Դ Խազարը (775–780) ևս շարունակում է հոր պատկերամարտական դիրքորոշումը: Սակայն իսավրացի առաջին կայսրերի պատկերամարտական քաղաքականությունը ընդհատվում է Կոստանդին Զ-ի (780–797) և նրա մոր՝ սկզբում խնամակալ, ապա՝ միանձնյա կայսրուհի Իրենեի (797–802) գահակալության շրջանում: 787 թ. Իրենեի նախաձեռնությամբ Փոքր Ասիայի Նիկեա քաղաքում տեղի է ունենում

---

[2] Այս կայսեր պատկերամարտական քաղաքականության մասին տե՛ս **S. Gero** 1973:

[3] Այս կայսեր պատկերամարտ քաղաքականության մասին տե՛ս **Gero** 1977:

[4] Տե՛ս **Hiereia** 2002: Այս ժողովի դավանաբանական որոշումների հայերեն թարգմանությունը տե՛ս Ս. Մելքոնյանի հատվածում:

նոր եկեղեցական ժողով, որը Հռոմի կաթոլիկ և Կ. Պոլսի օրթոդոքս եկեղեցիներին հայտնի է Նիկիայի Բ կամ Է տիեզերական ժողով անունով[5]: Ժողովի աշխատանքներին մասնակցում էին 350 եպիսկոպոսներ, ներառյալ՝ Հռոմի Ադրիանոս պապի, ինչպես նաև Անտիոքի, Ալեքսանդրիայի և Երուսաղեմի պատրիարքների ներկայացուցիչները: Ժողովը նախագահում է Կ. Պոլսի Տարասիոս պատրիարքը (784–806), ի տարբերություն նախորդ տիեզերական ժողովների, որոնք հրավիրվել և ղեկավարվել են բյուզանդական կայսրերի կողմից, այս եկեղեցաժողովը դատապարտելով պատկերամարտությունը՝ վերահաստատում է սրբապատկերների պաշտամունքը երկրում, հիմնվելով հիմնականում Հովհան Դամասկացի աստվածաբանի և նրա կողմնակիցների դավանաբանական ապացույցների վրա: Ժողովը նզովքի է ենթարկում պատկերահալած քաղաքականությանն աջակցած Կ. Պոլսի երեք՝ Անաստասիոս (730–754), Կոստանդին Բ (754–766) և Նիկետաս Ա (766–780) պատրիարքներին: Եկեղեցական ժողովներն ուղեկցվում էին հակառակորդ կողմի եպիսկոպոսների և պայքարող հոգևոր գործիչների աքսորով և պատիժներով, որոնք նկարագրվում են վերելքի նոր փուլ ապրող սրբախոսական գրականության մեջ:

Իրենեի և նրա որդի Կոստանդին Զ-ի կառավարման շրջանում թուլացած պատկերամարտության դիրքերը կրկին ամրապնդվում են Թ դարի սկզբին Լևոն Ե Հայկազն (813–820) կայսեր իշխանության տարիներին: Լևոն Ե-ի նախաձեռնությամբ Սբ. Սոֆիայում 815 թ. հրավիրում է եկեղեցական ժողով, որտեղ հայտարարվում է Հիերիայի ժողովի որոշումների ճշմարտացիությունը և դատապարտվում 787 թ. Նիկեայի եկեղեցաժողովը: Լևոն Ե-ին հաջորդած Միքայել Բ Կակազ (820–829) կայսրը պատկերների պաշտամունքի հարցում կողմնակից էր ոչ խիստ քաղաքականության: Նրա օրոք ամեն ոք կարող էր վարվել ինչպես ուզում էր, միայն առանց փորձելու ոտնձգության ենթարկել պետական օրենսդրությունը, որը հիմնվում էր 815 թ. ժողովի որոշումների վրա: Բյուզանդական կայսրության պատմության մեջ Պատկերամարտական շարժման վերջին դրսևորումների հետ պատմաբանը բախվում է Թեոփիլոս կայսեր (829–842) իշխանության

[5] Այս ժողովի մասին տե՛ս **Nicaea II** 2018:

դարաշրջանում, երբ իշխանությունները արգելում էին սրբապատկերների պատրաստումը և հալածաքներ էին կիրառում մի շարք հայտնի պատկերապաշտների նկատմամբ: Թեոփիլոսի մահից հետո, 843 թ. նրա կնոջ՝ կայսրուհի Թեոդորայի ջանքերով, Բյուզանդիայում վերականգնվում է պատկերապաշտությունը: Այդ իսկ պատճառով վերջինս, Իրենե կայսրուհու օրինակով, հռչակվում է օրթոդոքս եկեղեցու սուրբ, իսկ քառասնօրյա պահքի առաջին կիրակին ողջ Բյուզանդական կայսրությունում և օրթոդոքս աշխարհում տոնվում է իբրև «Ուղղափառության կիրակի»:

Պատկերամարտության դարաշրջանի քաղաքական և եկեղեցական պայքարին երկու բանակներում էլ բավական լուրջ մասնակցություն են ունեցել հայկական ծագում ունեցող կայսրեր, քաղաքական և եկեղեցական այլ գործիչներ: Այս առումով նշանավոր է Լևոն Գ Իսավրացու փեսա, Անատոլիկոն բանակաթեմի ստրատեգ Արտավազդ բռնապետը, որն իր աներոջ մահից հետո գրեթե երկու տարի (841–842) զավթեց կայսերական գահը, թույլ չտալով իր աներձագ՝ պատկերամարտ Կոստանդին Ե-ին մտնել Կոստանդնուպոլիս: Ավելի ուշ, այս անգամ պատկերների պաշտամունքի դեմ հանդես եկավ Լևոն Ե Հայկազն կայսրը (813–820), որը մերժելով Նիկիայի տիեզերական ժողովի սրբապատկերների պաշտամունքը վերականգնող որոշումները, վերականգնեց պատկերամարտական գաղափարները, որոնք հնչել էին արդեն Հիերայի ժողովում: Հետաքրքիր է, որ այս պայքարում նրա գործակիցներից էր հայկական ծագում ունեցող Հովհան Է Քերական Կ. Պոլսի հետագա պատրիարքը (837–843), որը գահընկեց արվեց կրկին հայկական ծագում ունեցող՝ մանկահասակ Միքայել Գ կայսեր (842–856) մոր և գահաժառանգի խնամակալ Թեոդորա կայսրուհու (856–867) և իր որդու կողմից: Հետագայում իհարկե Միքայել Գ-ի սպանությանը մասնակցեց և գահին տիրանալով կայսր դարձավ Բարսեղ Ա Մակեդոնացին (866–886), որին իր ժամանակի բյուզանդական պատմագրությունը կրկին վերագրում է հայկական ծագում: Նա հիմք դրեց բյուզանդական կայսրության մի նոր հարստության (866–1056 թթ.), որի ներկայացուցիչները իշխեցին երկրում մինչև սելջուկյան զորաբանակների հայտնվելը կայսրության արևելյան սահմաններին:

Պատկերամարտության դարաշրջանում (730–843) թե՛ պատկերապաշտների, և՛ թե պատկերամարտների բանակներում և երկրի կառավարման համակարգում հաճախ են հիշատակվում հայկական ծագում ունեցող գործիչներ, որոնց մեծագույն մասը դուրս էին եկել Արմենիակոն բանակաթեմից, դրանցից մի քանիսը բյուզանդական բանակաթեմերի զորահրամանատար-ստրատեգներ են. օրինակ՝ Լեվոն Գ-ի փեսա Արտավազդը, Լևոն Ե Հայկազնը, Թեոդորա կայսրուհու հորեղբայր Մանուել և կայսրուհու եղբայր Վարդ զորահրամանատարները և ուրիշներ[6]:

Սրբապատկերների խնդիրը մատենագրության մեջ, ծեսում և եկեղեցական կյանքում կարևոր դեր է խաղացել նաև Հայոց առաքելական եկեղեցու պատմության գրեթե բոլոր շրջաններում: Այդ մասին են վկայում Հայոց մատենագրության մեջ պահպանված Վրթանես Քերթողի, Հովհան Մայրավանեցու (Մայրագոմեցի), Հովհան Օձնեցու և այլոց անուններով պահպանված մատենագրական երկերը, ծիսական և արարողական գրականությունը: Դրանց հրապարակումը և հետազոտությունը սկսվել է դեռևս ԺԸ դարում և շարունակվում է մինչև մեր օրերը[7]: Ժամանակակից բյուզանդագիտության ասպարեզում հիշատակելի է բյուզանդագետ-արվեստաբան Սիրարփի Տեր-Ներսիսեանի վաստակը, որն առաջին անգամ փորձեց պահպանված հայագիտական-արվեստաբանական նյութը շաղկապել բյուզանդական մատենագրության տվյալների հետ[8]:

Նոր ժամանակների պատմագրության մեջ բյուզանդական Պատկերամարտություն երևույթի ամբողջական բնութագիրն առաջին անգամ տրվել է ԺԶ–ԺԷ դդ. եվրոպական Ռեֆորմացիայի դարաշրջանում, երբ ի թիվս դավանաբանական տարբեր հարցերի, Լյութերի և Կալվինի հետևորդները հրապարակային քննարկման առարկա դարձրեցին իրենց եկեղեցիներում սրբապատկերների պաշտամունքը ընդունելու կամ մերժելու խնդիրը: Կաթոլիկ և բողոքական աստվածաբանների բանավեճերը սրբապատկերների պաշտամունքի վերա-

[6] Այս գործիչների մասին տե՛ս նաև **Ադոնց** 2003:
[7] Տե՛ս **Petrosian** 1987:
[8] Տե՛ս **Der Nersessian** 1973, p. 379–403, **Տեր-Ներսեսյան** 1975, էջ 7–30:

բերյալ ստիպեց բյուզանդագետներին հրապարակել և մեկնաբանել պատկերամարտությանը վերաբերող հիմնական սկզնաղբյուրները[9]: Հիշյալ ժամանակաշրջանում պատկերամարտության և պատկերապաշտության խնդիրներին իրենց աշխատանքներում անդրադարձած հայտնի կաթոլիկ պատմաբաններից էին կարդինալ Կ. Բարոնիուսը և Լ. Մամբուրգը, իսկ բողոքականներից՝ Ֆ. Շպանհեյմը և Ժ. Բասնաժը: ԺԸ դ. եվրոպական Լուսավորության դարաշրջանի պատմաբաններ Շ. Մոնտեսքյոն, Է. Գիբբոնը, Շ. Լե Բոն ավելի խորացրեցին մեր պատկերացումներն այդ դարաշրջանի մասին: Բյուզանդագետների հետազոտական գործունեությունը խորացնելու և պատկերամարտության դարաշրջանի սկզբնաղբյուրների շրջանակի լայնացման տեսանկյունից մեծ դեր կատարեց արևելագետ Ժ. Սեն Մարտենը, ԺԹ դ. 30-ական թթ. էական լրացումներով վերահրատարակելով Լե Բոնի Բյուզանդիայի (Bas-Empire) պատմության բազմահատորյակը, հավելելով արաբերեն, հայերեն, պարսկերեն ու վրացերեն բազմաթիվ սկզբնաղբյուրների տեղեկություններ: ԺԹ դարասկզբին բյուզանդական պատկերամարտությանը նվիրված առանձին մենագրությամբ հանդես եկավ գերմանացի պատմաբան Ֆ. Շլոսերը, իսկ անգլիացի պատմաբան Գ. Ֆինլեյը փորձեց ապացուցել, որ Բյուզանդական կայսրության առանձին պատմությունը պետք է սկսել հենց Պատկերամարտության դարաշրջանից, ի տարբերություն իր նախորդների, տեսնելով շարժման առաջացման ոչ միայն կրոնադավանաբանական, այլ նաև քաղաքական ու տնտեսական դրդապատճառները: Պատկերամարտության դարաշրջանի իրավական փաստաթղթերի և երկրի ներքին կյանքում տեղի ունեցած փոփոխությունների վրա հետազոտողների ուշադրությունը հրավիրեց բյուզանդական իրավունքի գերմանացի պատմաբան և հրատարակիչ Ցախարիեն (ֆոն Լինգենտալ): Պատկերամարտության պատմության ներքին քաղաքական և սոցիալական խնդիրների բացահայտման ճանապարհով ընթացավ նաև ռուս բյուզանդագիտությունը (Ի. Վասիլև-

[9] Պատկերամարտության դարաշրջանի հրապարակված բյուզանդական սկզբնաղբյուրների դասակարգմանն ու վերլուծությանն է նվիրված՝ Կ. Բրուբակերի և Ջ. Հալդոնի քսան տարի առաջ լույս ընծայած մենագրությունը, տե՛ս **Brubaker&Haldon** 2001:

սկի, Ֆ. Ուսպենսկի և ուրիշներ), իսկ արվեստի պատմաբանները եկեղեցու պատմաբանների հետ միասին պատկերամարտության դարաշրջանը (Ը դար) ներկայացրեցին իբրև մշակութային մակընթացություն (Ն.Կոնդակով, Խ. Լոպարև և ուրիշներ), անվանելով՝ «մութ դարեր»:

ԺԹ դ. վերջին իրենց հատուկ մոտեցումները դրսևորեցին բիսմարկյան «մշակութային պայքար»-ի կողմ և ընդդիմադիր Եվրոպայի պատմաբանները, լութերականները (Ա. Լոմբար, Կ. Ճենկ, Ա. Հառնակ և ուրիշներ), նախահեղափոխական ռուս օրթոդոքս եկեղեցու պատմագրությունը (Վ.Բոլոտով, Ա.Լեբեդև, Բ.Միլորանսկիյ և ուրիշներ): Խորհրդային պատմագրության մեջ ավելի խորացվեցին պատկերամարտության շրջանի հասարակության սոցիալական պայքարի հետազոտության խնդիրները, շեշտադրելով՝ վանական տնտեսությունների դեմ սկսված պայքարը (Մ. Լեվչենկո, Մ. Սյուզումով, Ե. Լիպշից, Ա.Կաժդան և ուրիշներ), իսկ հայազգի պատմաբանները ուշադրությունը սևեռեցին պավլիկյան շարժման հետ առնչակցությանը (Աշ. Հովհանիսյան, Հր. Բարթիկյան և ուրիշներ): Պատկերամարտության դարաշրջանի հոգևոր դավանական, սոցիալ-տնտեսական պատմական և արվեստաբանական բնույթի նորովի ձևակերպումներով Ի դարի ընթացքում հանդես եկան մի շարք եվրոպական բյուզանդագետներ (Հ. Մենգես, Ճ. Դիլ, Ն. Յորգա, Ե. Կիտցինգեր, Գ. Օստրոգորսկի, Ժ.-Պ. Լեմեռլ, Ս. Գերո, Ս. Տէր-Ներսիսեան, Ա. Գրաբար և ուրիշներ):

ԻԱ դարերում ևս բյուզանդական պատկերամարտության դարաշրջանը և հատկապես պայքարը պատկերի պաշտամունքի դեմ համակողմանիորեն ուսումնասիրվել է բազմաթիվ հեղինակների կողմից, որոնք պատկերամարտությունը դիտարկել են ոչ միայն ներեկեղեցական ու դավանական պայքարի տեսանկյունից, այլև կարևորել են այդ շարժման հասարակական-քաղաքական բովանդակությունը, անդրադարձել՝ տնտեսական, հոգևոր, փիլիսոփայական և մշակութաբանական խնդիրներին (Մ. Կապլան, Ռ.-Ի. Լիլի, Վ. Բրանդես[10], Պ. Բռաուն, Մ.-Ֆ. Օզեպի, Ջ. Հալդոն Լ. Բրուբակեր, Մ. Համպերս և

[10] Տե՛ս **Brandes** 2018:

ուրիշներ), վերլուծել բյուզանդական արվեստաբանության տեսանկյունից (Մ. Բաչչի, Ա. Լիդով և ուրիշներ):

Բյուզանդական պատկերամարտությունն իբրև քաղաքական շարժում նկարագրել և մատենագիտական տվյալներով ներկայացրել են Լ. Բրուբակերը և Ջ. Հալդոնը[11], կայսերական գաղափարախոսությանն այդ դարաշրջանի անդրադարձել է Մ. Համպերսը[12]: Նա նաև վերջերս հրապարակել է մի շարք մասնագետների աջակցությամբ հոդվածների ժողովածու, ուր ընդհանրացրել է խնդրի հետազոտության կարևորագույն հարցերը[13]:

Ի տարբերություն բյուզանդական պատկերամարտության, որը եղել է ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, այդ խնդիրն իր ողջ ծավալով հայագիտության մեջ հետազոտման խնդիր չի դարձել: Թեպետ հայ միջնադարյան մատենագրությանը հայտնի են խնդրին վերաբերող մի շարք սկզբնաղբյուրներ, որոնք գրված են ի պաշտպանություն պատկերների (Վրթանես Քերթողի, Հովհան Օձնեցու և ուրիշների հեղինակությամբ): Հայագիտությանը հայտնի են մի շարք հետազոտություններ, որոնց հեղինակները (Ա. Սեդրակյան, Ե. արք. Պետրոսյան) փորձել են խնդրին մոտեալ Հայոց եկեղեցու դավանաբանական պատկերացումների տեսանկյունից, հավաքելով բավական մեծ քանակությամբ պատմաբանասիրական և ծիսա-արարողական նյութեր: Մյուսներն՝ անդրադարձել են երևույթի պատմաբանասիրական առանձին դրսևորումներին՝ դրանք դիտարկելով արվեստաբանության, մշակութաբանության և բանասիրության հարթակների վրա (Մ. վան Էսբրուկ, Հ. Քյոսեյան, Ա. Սահակյան, Հ. Պետրոսյան[14] և ուրիշներ): Այնուամենայնիվ, արդի հայ պատմագրության մեջ պատկերամարտության հետ առնչվող խնդիրները համակողմանի լուծում չեն ստացել, ի մի չեն բերվել հայտնաբերված մատենագրական նյութի տեղեկությունները պատմական գործընթացների համակողմանի վերլուծության ասպարեզում: Չի շարունակվել, Նիկողայոս Ադոնցի մոտեցումը, որով փորձ է կատարվել բյուզանդա-

[11] Տե՛ս **Brubaker&Haldon** 2011: Հմմտ նաև **Brubaker** 2012:
[12] Տե՛ս **Humpers** 2015:
[13] Տե՛ս **Humpers** 2021:
[14] **Պետրոսյան** 2008:

կան պատկերամարտության դարաշրջանի պատմական ֆոնի վրա հետազոտել այդ ժամանակի Հայոց պատմությունը, վեր հանել հայկական ծագում ունեցող բյուզանդական գործիչների խաղացած դերը կայսրության հոգևոր և քաղաքական կյանքում:

Ներկա գրքում հեղինակներն իրենց առջև խնդիր են դրել անդրադառնալ Հայոց քաղաքական և եկեղեցական պատմության համար այդ դարաշրջանի կարևորությանը, Բյուզանդական և հայկական սկզբնաղբյուրի փոխկապակցվածությանը, որի ընթացքում երբեմն փորձ է կատարվում շեշտադրել սրբապատկերների դերը ինքնության ձևավորման գործում: Գրքի ընթերցողը կնկատի, որ կարիք էր առաջացել պատկերամարտությանը և պատկերապաշտությանը վերաբերող սկզբնաղբյուրների տեղեկությունները քննարկել կանոնագիտության, պատմամատենագրական նյութերի, հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական հակամարտության խնդիրների լուսաբանման տեսանկյունից:

Հայ իրականության մեջ համեմատաբար ավելի շատ անդրադարձ է կատարվել պատկերամարտական շարժման պատմական ընթացքին վերաբերող զանազան խնդիրներին, քան դրա գաղափարական՝ կրոն-աստվածաբանական, կանոնագիտական կողմին: Այնինչ՝ ծիսադավանաբանական ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի շարժման եկեղեցաքաղաքական կողմերի համադրմամբ առավել համակողմանի ու ամբողջական ընկալելու թե՛ դարաշրջանը, և թե՛ երևույթը: Ըստ այսմ էլ կարելի է առանձնացնել առաջարկվող ուսումնասիրությունների շարքի հետևյալ ուղղությունները.

– Պատկերամարտությանը վերաբերող հայկական սկզբնաղբյուրների քաղաքական և գաղափարական միտվածության վերհանում,

– Հայկական և բյուզանդական սկզբնաղբյուրներում առկա պատկերամարտության, պատկերապաշտության և պատկերահարգության աստվածաբանական ընկալումների համեմատում (օրինակ՝ Վրթանես Քերթողի, Հովհան Օձնեցու և Հովհան Դամասկացու և այլոց տեսակետների համեմատում-վերլուծում),

– Պատկերամարտության դարաշրջանի Բյուզանդիայի եկեղեցական և քաղաքական ազդեցության վերհանում Մերձավոր Արևել-

քի և հատկապես Հայաստանի հոգևոր և մշակութային կյանքի խաչուղիներում,

– Պատկերամարտական տրամադրությունների և ընկալումների բացահայտում հայ միջնադարյան աղանդավորական (մանիքեցիներ, պավլիկյաններ և.ն.) շարժումներում,

– Հայոց եկեղեցում սրբապատկերների գործածման առանձնահատկությունների վերհանում,

– Պատկերների նկատմամբ կանոնաձիսական մոտեցումների էվոլյուցիայի ստուգում Հայոց եկեղեցու միջնադարյան ողջ պատմության ընթացքում և կանոնահիրավական հուշարձաններում:

Ի տարբերություն Բյուզանդիայում տեղ գտած պատկերամարտության և պատկերապաշտության, այս երևույթները Հայաստանում իրենց դրսևորումն են ունեցել ոչ այդպիսի սրությամբ և պատկերների պաշտամունքի հարցը ունեցել է բյուզանդականից տարբերվող յուրօրինակ դրսևորումներ: Այն երբևէ չի դարձել ոչ քաղաքական և ոչ էլ եկեղեցական դոկտրինա: Մեր խմբի հետազոտության խնդիրներից մեկն էլ եղել է պարզելը. թե ինչու՞ Հայաստանում պատկերամարտությունն ունեցավ այլ դրսևորումներ և ի՞նչ գործոններ են նպաստել այդ յուրօրինակության արտահայտմանը: Իհարկե, հիշատակված խնդիրների մի որոշ մասին են միայն կարողացել պատասխան գտնել գրքում ներգրավված հետազոտողները:

Հայոց ինքնությունն առավել լավ հասկանալու համար պետք է անդրադառնալ նրան յուրօրինակություն հաղորդող ծիսադավանական խնդիրներին և ի մասնավորի՝ այդ ինքնատիպության արահայտություններից մեկը հանդիսացող հայկական պատկերամարտությանը և պատկերապաշտությանը: Միջանադրում հայոց եկեղեցին հայ ժողովրդի և իր ինքնության պահպանման կարևորագույն գործոն է համարել ոչ միայն սեփական գրերի ստեղծումը, ազգային դպրության, լեզվի, մշակույթի զարգացումը, հանուն քրիստոնեական հավատի այլակրոն երկրների դեմ մղած պատերազմները, այլև՝ դավանական, ծիսապաշտամունքային և եկեղեցական ինքնուրույնության պաշտպանությունը: Դրանով էլ պայմանավորված է եղել միջնադարում հայոց և բյուզանդական եկեղեցիների միջև տեղ գտած քաղկեդոնական-հակաքաղկեդոնական հակամարտությունը:

Հետազոտական ծրագիրը. Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորված (ծածկագիր՝ 21T-6A286) թեման, բացի ղեկավարից կարող էր ունենալ երկու անդամ և մեկ արտասահմանյան խորհրդական: Ծրագրի հաստատման պահին՝ առանց թեմայի աշխատակիցներին զգուշացնելու, ԳԿ-ն առանց լուրջ դրդապատճառի, դուրս էր նետել արտասահմանյան խորհրդականի անունը, խումբն աշխատեց առանց հաշվի առնելու այս փոփոխությունը և ինչպես տեսնում եք բացի արտասահմանյան գործընկերոջից թեմայի մեջ են ներգրավվել նաև այլ մասնագետներ:

Խմբի ղեկավար Ա. Բոզոյանը հիշյալ թեմայի շրջանակում նպատակ է ունեցել հետազոտել Է–Թ դարերում Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգը և դրա առնչակցությունը Տիեզերական եկեղեցու Կ. Պոլսի, Անտիոքի և Երուսաղեմի պատրիարքական աթոռների հետ[15]: Ուսումնասիրել պատկերների հարգանքին վերաբերող Հայող եկեղեցական մատենագրության մեջ գործող կանոնական իրավունքի հուշարձանները[16]: Նրա առջև դրված խնդիրներից է եղել նաև պատկերամարտության դարաշրջանի բյուզանդական սկզբնաղբյուրների ԺԲ դարում հայերեն թարգմանված որոշ իրավական երկերի (Էկլոգա և հավելվածներ, Նոմոկանոն) հետազոտության կարևորության բացահայտումը[17]:

Թեմայի հեղինակային խմբի անդամ Գաբրիել Նահապետյանն իր առջև խնդիր է դրել հետազոտել պատկերամարտության սկզբնաղբյուրները, խնդրի քննությանը նվիրված համաշխարհային պատմագրության որոշ դրսևորումները, արաբական տիրապետության ազդեցությունները, Խազարական խաքանատի նկատմամբ բյուզանդական և արաբական տիրապետության դիրքորոշումը, եկեղեցական դավանանքի դերը Զ–Ը դդ. քաղաքական պայքարի ոլորաններում պատկերամարտական տրամադրությունները եւ ընկալումները

---

[15] Տե՛ս **Բոզոյան** 2024, էջ 51–87:

[16] **Բոզոյան** 2020, էջ 152–179:

[17] Այդ թեմաներին վերաբերող աշխատանքներից մի քանիսը տե՛ս **Bozoyan** 2017, p. 79–118 , **Բոզոյան** 2017, էջ 86–95 , **Բոզոյան** 2023, էջ 265–320, **Բոզոյան** 2023ա, էջ 85–119, **Bozoyan** 2024:

հայ միջնադարյան աղանդավորական (մանիքեականություն, պավլիկյանություն և ն.) շարժումների ենթատեքստում:

Թեմայի հեղինակային խմբի անդամ Սարգիս Մելքոնյանը Հայոց եկեղեցու պատմության հենքի վրա փորձել է համակողմանի քննության ենթարկել բյուզանդական կանոնական բնագրերը՝ ցույց տալու համար Կ. Պոլսի և Հայոց եկեղեցու առանձնահատուկ վերաբերմունքը պատկերների հանդեպ: Հրապարակելով դարաշրջանի Տիեզերական եկեղեցու մի շարք կանոնական երկեր նա մասնագետներին նյութ է տրամադրել հետագա հետազոտությունների համար: Նրան հետաքրքրող հարցերից է եղել նաև բյուզանդական և հայոց եկեղեցիների դիրքորոշումը միջեկեղեցական երկխոսության համատեքստում[18]:

Գրքի հեղինակային խմբի անդամ Զաքարիա ծ.վ. Բաղումյանը իր առջև նպատակ է դրել հետազոտել պատկերների աստվածաբանական և արարողակարգային ընկալումները Ե–ԺԵ դդ. հայ վարդապետների երկերում, վերլուծել դրանց նշանակությունը Հայոց եկեղեցու ծիսակարգում և կանոնակարգող մատյաններում: Արվեստաբան Զառա Հակոբյանի և դրամագետ Արմինե Զոհրաբյանի առջև, որոնք գրքին են միացել վերջերս, խնդիր է դրվել վերլուծել դարաշրջանի պահպանված հայկական մոնումենտալ հուշարձանները և դրամագիտական նյութերը:

Թեպետ խորհրդական, Քրիստոնյա Արևելքի մատենագրությունների ճանաչված մասնագետ, հանրաճանաչ «Muséon» ամսագրի խմբագիր, Նոր Լուվենի համալսարանի պրոֆ. Անդրեա Բ. Շմիդտին ծրագրի իրականացման տարիներին թեմայի միջից հանել էր ՀՀ Գիտության կոմիտեն, նա լիովին կատարել է իր պարտականությունները: Ա. Շմիդտը իր առջև խնդիր էր դրել մեզ օգնել պատկերահարգության և պատկերամարտության ընկալումների առումով, զուգահեռներ գտնել Հյուսիսային Ասորիքում և Միջագետքում գործող ասորական քրիստոնյա երկու եկեղեցիների (հակոբիկ և նեստորական) ավանդույթներում և ծեսերում, ցույց տալ դրանց արմատները, համե-

[18] Տե՛ս **Մելքոնեան** 2024:

մատելով բյուզանդական և հայկական պատմական և աստվածաբանական ընկալումների հետ:

Գիրքն ապրոբացնելու և հեղինակների տեսակետներն հստակեցնելու համար 2024 թ. հունիսի 10-ին և սեպտեմբեր 23–24-ին հրավիրվել է ընդլայնված աշխատանքային գիտաժողով, ուր զեկուցումներ են ընթերցել թեմայի և գրքի մասնակիցները:

Թեմայի ղեկավար, պ.գ.դ. Ա. Բոզոյան
ՀՀ ԳԱԱ ԱԻ
DOI: 10.54503/978-5-8080-1550-0-5